ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ Ռ. Մարտիրոսյան

Կոտայքի տարածաշրջանային

պետական քոլեջի կառավարման

խորհրդի նախագահ

16 դեկտեմբերի 2018 թվական

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՀՐԱԶԴԱՆ 2018

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է ԿՏՊՔ-ի մանկավարժական խորհրդի իրավասությունները, ձևավորման և գործունեության կարգը:

1.2. Մանկավարժական խորհրդի կանոնակարգը քննարկում և ընդունում է քոլեջի կառավարման խորհուրդը:

1.3. Մանկավարժական խորհրդի կանոնակարգի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են նույն կարգով:

2. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ԿԱԶՄԸ

2.1. Մանկավարժական խորհրդի աշխատանքը կազմակերպում և ղեկավարում է ԿՏՊՔ-ի տնօրենը, ով ի պաշտոնե մանկավարժական խորհրդի նախագահն է: Մանկավարժական խորհրդի կազմը ձևավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա մինչև սեպտեմբերի 1-ը: Մանկավարժական խորհրդի անդամների անվանական կազմը հաստատում է քոլեջի տնօրենը:

2.2.ԿՏՊՔ-ի մանկավարժական խորհուրդը քոլեջում կոլեկտիվ ղեկավարման մարմին է , որը կոչված է նպաստելու ԿՏՊՔ-ում տարվող ուսումնական աշխատանքներին և դրանց արդյունավետության բարձրացմանը:

2.2. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են տնօրենի տեղակալները, ամբիոնի վարիչները, կաբինետի վարիչները, կուրսղեկները և բոլոր դասախոսները: Մանկավարժական խորհրդի իրավասությունները դադարում են ուսումնական տարվա ավարտից հետո: Խորհուրդը իր գործունեությունը իրականացնում է նիստերի միջոցով, որոնք պետք է լինեն տարին 2-3 անգամ:

3.ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3.1.Մանկավարժական խորհուրդը քննարկում է՝

- *քոլեջի զարգացման ծրագիրը և հանդես գալիս առաջարկությամբ*
- *մասնագիտական պետական չափորոշչին համապատասխան ծրագրերի իրագործման հարցերը*
- *ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ տարվող արտալսարանային և արտաքոլեջային աշխատանքների կազմակերպման հարցերը*

- *ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր (ֆինանսական, կազմակերպչական)*
- *քոլեջի աշխատանքային ռեժիմի, աշխատանքային շաբաթվա տևողության, աշխատողին խրախուսելու վերաբերյալ հարցերը և առաջարկություններ ներկայացնում հաստատության կառավարման մարմիններին:*

3.2.Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունում՝

- *սովորողներին կուրսից-կուրս փոխադրելու կամ հեռացնելու մասին*
- *սովորողներին քննություններին թույլատրելու մասին*
- *սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպելու մասին*
- *անհարգելի բացակայությունների, ներքին կարգապահական կանոնները խախտելու պատճառով օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին*
- *գերազանց առաջադիմություն ունեցող ուսանողներին խրախուսելու մասին*
- *փոխադարձ դասալսումների արդյունքում ի հայտ եկած հարցերի վերաբերյալ:*

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն *Գ. Գևորգյան*